«ԳԱԶՇԻՆ ՄՉ»
«ГАЗШИН МЦ»
«GAZSHIN MZ»

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԳՇ - 152/21

ք. Երևան

21 հոկտեմբերի 2021թ.

ՀՀ արդարադատության նախարարություն
(կազմակերպության անվանումը)

(այսուհետև՝ *Պատվիրատու*), ի դեմս աշխատակազմի ղեկավարի ժ/պ
(պաշտոն)

Զառա Մարգարյանի
(Անուն, Հայրանուն, Ազգանուն)

որը գործում է համաձայն կանոնադրությունների հիման վրա, մի կողմից, «ԳԱԶՇԻՆ ՄՉ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆԸ (այսուհետև՝ *Կատարող*), ի դեմս տնօրեն՝ Հովհաննես Ազատի Ասատրյանի, որը գործում է համաձայն ընկերության կանոնադրության, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով՝ Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել մատուցված ծառայությունների համար:

1.2. Կատարողը պարտավորվում է մատուցել հետևյալ ծառայությունները՝

- ք. Երևան, Մոսկովյան 1, Կոմիտաս 49/3, Դավիթաշեն 2-րդ թաղ. 15/3 և Կոմիտաս 54բ հասցեներում գտնվող տարածքների ծխաօդատար ուղիների ստուգում և հրշեջ ակտի տրամադրում /4 հատ/:
- Գազի տնտեսության պատասխանատու անձանց ուսուցանում և վկայականների տրամադրում /4 անձ/

այսուհետ «Ծառայություններ»:

1.3. Ծառայությունների մատուցման ժամկետն է՝ Պայմանագրի ստորագրման պահից 30 աշխատանքային օրվա ընթացքում: Կատարողն իրավունք ունի Ծառայությունները մատուցել ժամկետից շուտ.

1.3.1. Ծառայությունները մատուցված են համարվում Պատվիրատուի կամ նրա լիազոր ներկայացուցիչների կողմից հանձնման-ընդունման ակտի ստորագրման պահից:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով.

2.1.2. Ծառայությունները մատուցել ամբողջ ծավալով, սույն պայմանգրի 1.3. կետում նշված ժամկետում.

2.2. Պատվիրատուն պարտավոր է Ծառայությունների մատուցման համար վճարել սույն պայմանգրի 3-րդ կետում նշված գնին համապատասխան

2.3. Պատվիրատուն իրավունք ունի՝

2.3.1.Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայությունների մատուցման կատարման ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը.

2.3.2. Մինչև ակտի ստորագրումը՝ ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված Ծառայությունների չափին: